



Հավելված
հաստատված է ՀՀ Տավուշի
մարզպետի 2019թ. հոկտեմբերի 3-ի
թիվ 132-Ա որոշմամբ:



Տեխնոլոգիական
Ամբողջական
Վերարտադրողական
Ուսուցողական
Շարունակական



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ
2019-2024

Տավուշ - 2019

ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Ժամանակակից զբոսաշրջությունը համաշխարհային մակարդակով համարվում է տնտեսության արագ և դինամիկ զարգացող ճյուղերից մեկը, որին ներկայումս բաժին է ընկնում համաշխարհային ՀՆԱ 10,4%-ը, իսկ տարեկան ՀՆԱ-ում մասնաբաժնի ավելացումը միջինում տատանվում է 4%-ի սահմաններում: Զբոսաշրջության ոլորտում համաշխարհային մասշտաբով աշխատում է շուրջ 313 մլն մարդ կամ աշխարհում յուրքանաչյուր 10 աշխատակցից մեկը: Միջազգային զբոսաշրջիկների քանակը տարեկան միջինում ավելանում է 3,3%-ով, իսկ 2018 թ. այն հասել է 1,4 միլիարդի [14], ինչի արդյունքում էլ զբոսաշրջությունը տարածաշրջանային և տեղական մակարդակներում նույնպես դառնում է տնտեսության զարգացման գերակա ուղղություն, այդ թվում և ՀՀ-ում:

Արդեն շուրջ մեկ տասնամյակ է զբոսաշրջությունը համարվում է ՀՀ տնտեսական զարգացման գերակա ուղղություններից մեկը, որին բաժին է ընկնում ՀՀ ՀՆԱ շուրջ 4,4%-ը (477,7 մլն ԱՄՆ դոլար՝ 2017թ.), իսկ 2018-2028 թթ համար կանխատեսվում է տարեկան 4,2% աճ, 2028 թ. 8,5 % (784,3 մլն ԱՄՆ դոլար) ՀՆԱ մասնաբաժնով: Զբոսաշրջության ոլորտը ՀՀ-ում ապահովում է 44 500 աշխատատեղ (2017թ.)՝ 2018-2028 թթ համար տարեկան 1,4% աճի կանխատեսմամբ, իսկ 2028 թ.՝ 52 000 աշխատատեղի ապահովմամբ: 2017 թ. այցելուների կողմից ապահովվող արտահաման բաժինը կազմել է ՀՀ ընդհանուր արտահանման ծավալի 29,2%-ը (1,092.4 մլն ԱՄՆ դոլար), որը 2018-2028 թթ. համար կանխատեսվում է 3,2 % տարեկան աճ ծավալով՝ 2028 թ. 27,5 % մասնաբաժնով (1,754.5 մլն ԱՄՆ դոլար): Այս ցուցանիշների նման վիճակը պայմանավորված է ՀՀ ներգնա զբոսաշրջիկների քանակի ավելացմամբ. 2018 թ. այն կազմել է ավելի քան 1,6 մլն զբոսաշրջիկ, որը շուրջ 13 անգամ գերազանցում է 2000 թ. գրանցված արդյունքը [14]:

Տավուշի մարզը համարվում է զբոսաշրջության զարգացման մեծ ներուժ և լայն շուկա ունեցող մարզ, որի իրական զբոսաշրջային շուկան գնահատվում է տարեկան մոտ 300 000 ներգնա զբոսաշրջիկ՝ կազմակերպված(13%) և ինքնակազմակերպ(87%) այցելությունների տեսքով (2018 թ. տվյալների փորձագիտական վերլուծություն) [8]:

Հայեցակարգը ստեղծվել է Տավուշի մարզպետարանին կից Զբոսաշրջության զարգացման աշխատանքային խմբի կողմից, որի կազմը ձևավորվել է պետություն - կրթական/գիտական հաստատություն - մասնավոր հատված - միջազգային կազմակերպություն քառանկյունու ներկայացուցիչներից:

Հայեցակարգը բաղկացած է տիտղոսաթերթից, ամփոփ համառոտագրից, ներածությունից, հինգ բաժիններից, ամփոփ եզրակացությունից և օգտագործված աղբյուրներից:

Հայեցակարգն իր մեջ ներառում է Տավուշի մարզի զբոսաշրջության ոլորտի առկա վիճակի ընդհանուր վերլուծությունը, նկարագրում է մարզի զբոսաշրջային ներուժը, զարգացման հիմնական ուժեղ կողմերը և դրանցից բխող հնարավորությունները: Ներկայացնում և հիմնավորվում են մարզի զբոսաշրջության առանցքային և հեռանկարային տեսակները, համակարգված ներկայացվում է մարզի զբոսաշրջության զարգացման խնդիրները, դրանց լուծման հնարավոր պատասխանատուները և առաջարկվում են լուծման հնարավոր տարբերակներ և ուղիներ: Հայեցակարգի գաղափարները հիմնված են կայուն զարգացման գաղափարախոսության և կայուն զբոսաշրջության նպատակների, սկզբունքների և մոտեցումների վրա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ	2
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐԸ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ	5
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԸ	7
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՅ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ	12
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՅ ԼՈՒԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ	18
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՅՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ	24
ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	27
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ	28

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մարդկային ցանկացած գործունեության հաջողության գրավական է համարվում այդ գործունեության իրականացման գաղափարական հիմքի և սկզբունքների հստակեցումը: Այս հայեցակարգի համար նման հիմք է ընդունվում կայուն զարգացման գաղափարախոսությունը և կայուն զբոսաշրջության սկզբունքները, որոնց շրջանակներում ձևակերպվել է Տավուշի մարզի զբոսաշրջության զարգացման հետևյալ տեսլականը, առաքելությունը, նպատակները և խնդիրները, որոնք բխում են նմանատիպ գործընթացների կազմակերպման համաշխարհային և ազգային մոտեցումներից:

Տեսլական

Զբոսաշրջությունը Տավուշի մարզում պետք է դառնա տեխնոլոգիական, ամբողջական, վերարտադրողական, ուսուցողական և շարունակական, իսկ Տավուշի մարզը զբոսաշրջության տեսանկյունից պետք է լինի տեղական, տարածաշրջանային և համաշխարհային նշանակության կայուն զբոսաշրջային դեստինացիա¹:

Տեխնոլոգիական – մարզի զբոսաշրջության զարգացումը պետք է կապված լինի ժամանակակից տեխնոլոգիաների (համակարգչային, տեղեկատվական) հետ:

Ամբողջական – զբոսաշրջությունը պետք է դիտարկել որպես համակարգ և համակարգի տարր:

Վերարտադրողական – զբոսաշրջության զարգացումը պետք է հանգեցնի ինքնավերարտադրվող զբոսաշրջային ինդուստրիայի բաղադրիչների ձևավորմանը և զարգացմանը և չխախտի տեղական մշակութային և բնական համակարգերի ինքնավերարտադրման հատկությունները:

Ուսուցողական – զբոսաշրջային ցանկացած գործունեություն պետք է հիմնվի կրթության վրա և ունենա կրթական բաղադրիչ:

Շարունակական – զբոսաշրջային ցանկացած գործունեություն պետք է ունենա երկարաժամկետ նպատակներ և զարգացման ռազմավարություն:

Առաքելություն

Աջակցել Տավուշի մարզում զբոսաշրջային գործունեության մեջ ներգրավված շահագրգիռ տեղական/մարզային կողմերին իրենց գործունեության զարգացումն իրականացնել կայուն զբոսաշրջության սկզբունքների շրջանակներում:

Նպատակ

Ստեղծել գաղափարական և մոտեցումների ընդհանուր հիմք մարզի զբոսաշրջության ոլորտի զարգացման համար որոշումներ կայացնող կողմերի (տեղական, ազգային, միջազգային) գործողություններն ուղղորդելու նպատակով:

Խնդիրներ

1. Նպաստել զբոսաշրջության ոլորտում որոշումների կայացման արդյունավետության բարձրացմանը:
2. Բարձրացնել մարզի միջազգային և ներքին զբոսաշրջային իմիջը:
3. Խթանել մարզում զբոսաշրջային մշակույթի զարգացմանը:
4. Խթանել նորարարական գաղափարների ստեղծմանը և զարգացմանը:

¹Ներկայումս գոյություն ունեն զբոսաշրջային դեստինացիաների բազում սահմանումներ [10;12]:Այդ սահմանումների ընդհանրացումով կարելի է ասել, որ զբոսաշրջային դեստինացիան ընկալվում է որպես աշխարհագրական կամ վարչական սահմաններով տարածք, որտեղ զբոսաշրջիկն անց է կացնում իր ժամանակը և, որն ունի զբոսաշրջային ռեսուրսներ ու անհրաժեշտ զբոսաշրջային ենթակառուցվածքներ: Իսկ կայուն զբոսաշրջային դեստինացիան այնպիսի տարածք է (երկիր, մարզ, քաղաք, գյուղ, համայնք, բնության հատուկ պահպանվող տարածք և այլն), որը զարգանում է կայուն զբոսաշրջության սկզբունքներին և նպատակներին համապատասխան:

**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԱԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ**

Տավուշի մարզի զբոսաշրջության զարգացման համար ընդունվել են կայուն զբոսաշրջության սկզբունքները, նպատակները և մի շարք տեղական մոտեցումներ [3;12;13]:

Ներկայումս կայուն զբոսաշրջությունը դիտարկվում է որպես զբոսաշրջության զարգացման ընդհանուր գաղափարական հիմք և այն չի համարվում «զբոսաշրջության նոր կամ հատուկ տեսակ, այլ զբոսաշրջության բոլոր տեսակները պետք է ձգտեն լինել հնարավորինս առավել կայուն» [13]: Իսկ զբոսաշրջության կայուն զարգացումը մեկնաբանվում է հետևյալ կերպ, - «Զբոսաշրջության կայուն զարգացումը բավարարում է ներկայիս զբոսաշրջիկների և հյուրընկալող տարածքների կարիքները և միաժամանակ պահպանում և ուժեղացնում է ապագայի հնարավորությունները»[12]: Կայուն զբոսաշրջությունը պետք է բավարարի հետևյալ հիմնական *պահանջներին* [13]՝

1. ապահովել զբոսաշրջության զարգացման հիմնական տարրեր համարվող, գլխավոր էկոլոգիական պրոցեսներին և բնական ժառանգությանն ու կենսաբազմազանությանը նպաստող *շրջակա միջավայրի* ռեսուրսների օպտիմալ օգտագործումը,
2. հարգել հյուրընկալող տարածքների *սոցիալ-մշակութային* ինքնությունը, պահպանել նրանց կառույցները և մշակութային ժառանգությունը, ավանդույթները և աջակցել միջմշակութային ըմբռնմանն ու հանդուրժողականությանը,
3. ապահովել երկարաժամկետ *տնտեսական* գործողությունների կենսունակությունը, բոլոր շահառու կողմերի սոցիալ-տնտեսական եկամուտների արդարացի բաշխումը, ներառյալ կայուն աշխատատեղերը, հյուրընկալող կողմի հնարավորությունները և սոցիալական ծառայությունները և նպաստել աղքատության հաղթահարմանը:

Կայուն զբոսաշրջության *սկզբունքներն* XXI դարի օրակարգ փաստաթղթում ձևակերպված են հետևյալ կերպ [12]

- ճանապարհորդությունը և զբոսաշրջությունը մարդկանց պետք է օգնեն ներդաշնակ հարաբերություններ ստեղծել բնության հետ,
- ճանապարհորդությունը և զբոսաշրջությունը պետք է իրենց ներդրումն ունենան էկոհամակարգերի պահպանման և վերականգնման գործընթացում,
- ճանապարհորդությունը և զբոսաշրջությունը պետք է հենվեն արտադրության և սպառման կենսունակ մոդելների վրա,
- ճանապարհորդային և զբոսաշրջային ծառայությունների առևտրում պաշտպանողական (պրոտեկցիոնիզմ) քաղաքականությունը պետք է մասնակի կամ ամբողջությամբ փոխվի,
- զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները պետք է լուծվեն շահագրգիռ կողմերի (տեղաբնակների) մասնակցությամբ՝ տեղական մակարդակում որոշումների պլանավորման ժամանակ,
- պետությունները մեկը մյուսին պետք է տեղեկացնեն հնարավոր բնական աղետների մասին, որոնք կարող են վնասել ինչպես զբոսաշրջիկներին այնպես էլ զբոսաշրջային ոլորտին,
- ճանապարհորդությունը և զբոսաշրջությունը պետք է նպաստեն տեղաբնակների համար աշխատատեղերի ստեղծմանը,
- զբոսաշրջության զարգացումը պետք է ապահովի և աջակցի տեղաբնակների մշակույթին և ավանդույթներին,
- ճանապարհորդության և զբոսաշրջության ինդուստրիան պետք է հենվեն շրջակա միջավայրի ոլորտում առկա միջազգային իրավունքի վրա:

Հենվելով եղած սկզբունքների և պահանջների վրա՝ ՄԱԿ ԶՀԿ-ն և ՄԱԶԾ-ը միասին (2005) ձևակերպել են կայուն զբոսաշրջության հիմնական *նպատակները* [13]՝

- ✓ *Տնտեսական կենսունակություն* – ապահովել զբոսաշրջային դեստինացիաների և ձեռնարկությունների կենսունակությունը և մրցունակությունը՝ նրանց զարգացման և երկարաժամկետ եկամուտներ ստանալու նպատակով:

- ✓ *Տեղական բարգավաճում* – մեծացնել զբոսաշրջության ներդրումը հյուրընկալող դեստինացիայի տնտեսության մեջ, ինչպես նաև նպաստել, որպեսզի այցելուների ծախսած գումարները մնան տեղում (տեղական համայնքներում):
- ✓ *Զբաղվածության որակ* – ավելացնել զբոսաշրջության կողմից ստեղծվող տեղական աշխատատեղերի քանակը և ուժեղացնել դրանց որակը՝ ներառյալ աշխատավարձի չափը, սպասարկման պայմանները և բացառել խտրականությունը՝ անկախ սեռից, ռասայից, ֆիզիկական թերություններից և այլն:
- ✓ *Սոցիալական արդարություն* – ձգտել հավասար և արդար կերպով բաշխել զբոսաշրջությունից ստացված եկամուտներն ընդունող համայնքի բոլոր անդամների միջև՝ ներառյալ աղքատների համար հասանելի ծառայությունների ստեղծումը, եկամուտների ավելացումը և հնարավորությունների զարգացումը:
- ✓ *Այցելուների բավարարվածություն* – ապահովել անվտանգ, բավարարող և անմոռանալի փորձ այցելուների համար, որը հասանելի կլինի բոլորին՝ առանց որևէ խտրականության՝ անկախ սեռից, ռասայից, ֆիզիկական ընդունակություններից և այլն:
- ✓ *Տեղական վերահսկողություն* – ներառել և ուժեղացնել տեղական համայնքների իրավունքները նրանց տարածքներում զբոսաշրջության ապագա զարգացման և կառավարման պլանավորման և որոշումների կայացման գործընթացում և ապահովել շահագրգիռ կողմերի հետ խորհրդատվությունների անցկացումը:
- ✓ *Համայնքի բարեկեցություն* – աջակցել և բարելավել տեղական համայնքների կյանքի որակը՝ ներառյալ սոցիալական կառույցները, ռեսուրսների, հարմարությունների (ծառայությունների), կենսապահովման համակարգերի անարգել օգտագործումը՝ խուսափելով ցանկացած տեսակի սոցիալական դեգրադացիայից և շահագործումից:
- ✓ *Մշակութային հարստություն* – հարգել և պահպանել տեղական համայնքների պատմական ժառանգությունը, յուրահատուկ մշակույթը, ավանդույթները և ինքնօրինակությունը:
- ✓ *Ֆիզիկական ամբողջություն* – աջակցել և բարելավել քաղաքային և գյուղական լանդշաֆտների որակը և խուսափել շրջակա բնական միջավայրի ֆիզիկական և տեսողական դեգրադացիայից:
- ✓ *Կենսաբանական բազմազանություն* – աջակցել բնական տարածքների, կենդանիների ապրելավայրերի, վայրի բնության պահպանությանը և նվազեցնել դրանց հասցվող վնասները:
- ✓ *Ռեսուրսների արդյունավետություն* – նվազեցնել զբոսաշրջային ծառայությունների և հարմարությունների զարգացման և գործունեության ապահովման համար օգտագործվող սպառվող և չվերականգնվող ռեսուրսները:
- ✓ *Բնապահպանական անաղարտություն* – նվազեցնել զբոսաշրջային ձեռնարկությունների և այցելուների կողմից օդի, ջրի և հողատարածքների աղտոտումը և թափոնների առաջացումը:

Տավուշի մարզում զբոսաշրջության զարգացման համար պետք է հաշվի առնել հետևյալ *մոտեցումները* [8].

- *Ապահովել համակարգային մոտեցում* - զբոսաշրջությունը դիտարկել որպես տնտեսական համակարգի տարր/ենթահամակարգ, այսինքն՝ զբոսաշրջության զարգացումը դիտարկել տնտեսության և մարդկային գործունեության մյուս տեսակների հետ մեկ ամբողջության մեջ:
- *Հաշվի առնել մարզի տարածքի առանձնահատկությունները* - մշակութային, սոցիալ-տնտեսական, աշխարհաքաղաքական, պատմական, բնակլիմայական, այսինքն՝ զբոսաշրջային գործունեության իրականացման ժամանակ ուղղորդվել տարածքի առանձնահատկություններով:
- *Ապահովել ժառանգականություն* - հաշվի առնել մարզում ոլորտի զարգացման պատմությունը, այսինքն՝ մարզում զբոսաշրջային գործունեության իրականացման համար հաշվի առնել զբոսաշրջության զարգացման անցյալը և փորձը:

- *Գլոբալիզացիային մասնակցություն* - մարզի զբոսաշրջության զարգացումը համադրել ոլորտի զարգացման համաշխարհային միտումների հետ, այսինքն՝ մարզի զբոսաշրջության զարգացման համար հաշվի առնել տվյալ ժամանակի գլոբալ պահանջները և միտումները:
- *Առաջնահերթության և տարածքային տարբերակում* - զբոսաշրջությունը որպես տնտեսության լոկոմոտիվ/զբոսաշրջությունը որպես «ուղեկից ապրանք» կախված մարզի տվյալ հատվածի ներուժից և աշխարհագրական դիրքից, այսինքն՝ մարզի յուրաքանչյուր տարածքին ցուցաբերել տարբերակված մոտեցում:
- *Ապահովել ստեղծվող զբոսաշրջային միջավայրի/ենթակառուցվածքների ճկունությունը* - իրավիճակի փոփոխման պարագայում վերապրոֆիլավորման հնարավորություն, այսինքն՝ հնարավորության սահմաններում մարզի զբոսաշրջության զարգացման համար ստեղծվող ենթակառուցվածքները պետք է լինեն բազմապրոֆիլ և պահանջարկի փոփոխությանն արագ արձագանքելու որակներով հագեցած:
- *Համագործակցության և մասնակցայնության ապահովում* - մարզի զբոսաշրջության զարգացման համար հնարավորինս ապահովել բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը:
- *Նորարարության խթանում* - զբոսաշրջության զարգացման համար առաջնահերթությունները տալ ոչ ստանդարտ և նորարարական լուծումներին:
- *Անվտանգություն և ապահովություն* - զբոսաշրջային գործունեության կազմակերպման ժամանակ ապահովել անհատների՝ զբոսաշրջիկ, տեղացի և այլն, ֆիզիկական, առողջական, հոգեբանական անվտանգությունը:

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԸ

Աշխարհագրական դիրքը: Տավուշի մարզը գտնվում է ՀՀ հյուսիս-արևելյան մասում: Հարավում և հարավ-արևելքում սահմանակից է ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի, արևմուտքում՝ Լոռու մարզերին, հյուսիսում՝ Վրաստանի Հանրապետությանը (50 կմ սահման), արևելքում և հյուսիս-արևելքում՝ Ադրբեջանի Հանրապետությանը (350 կմ սահման): Մարզով ձգվում են 146 կմ միջպետական, 253 կմ հանրապետական նշանակության ճանապարհներ: Աղստևի ձորով է անցնում Իջևան-Հրազդան երկաթուղու 70 կմ-ոց հատվածը (ներկայումս չի գործում): Հյուսիսային սահմանի երկայնքով՝ Դեբեդի ափով, անցնում է Երևան-Թբիլիսի երկաթուղու 7 կմ-ոց հատվածը [15]:

Տավուշի մարզը ներառում է պատմական Հայաստանի 4 աշխարհների գավառներ ու գավառամասեր: Մարզի տարածքի հյուսիսային մասը (Նոյեմբերյանի տարածաշրջան) հիմնականում համապատասխանում է Գուգարքի Կողբափոր, կենտրոնական և արևմտյան մասերը (Իջևանի տարածաշրջան)՝ Կայեն և Կանգարք գավառներին: Հարավային մասը՝ (Դիլիջան) մտել է Այրարատ աշխարհի Վարաժնունիք գավառի մեջ, իսկ արևելյան մասի (Շամշադինի տարածաշրջան) բնակավայրերն ու հնավայրերը հիշատակվում են Ուտիք աշխարհի Փառիսոս և Արցախ աշխարհի Քուստի գավառներում: Ուտիքի մեջ է մտել մարզի տարածքի հյուսիսարևելյան՝ ավելի փոքր մասը (դա համընկել է Ուտիքի Տավուշ գավառի հետ, որի անունն էլ վերցրել է մարզը) [6;7]:

Այսպես, մարզն ընդգրկում է Իջևանի, Նոյեմբերյանի և Բերդի (Շամշադինի) նախկին տարածաշրջանները և համարվում է Հայաստանի Երրորդ Հանրապետության 10 մարզերից մեկը, որը մարզի կարգավիճակ է ստացել 1995թ.: Տավուշի մարզկենտրոնն է Իջևան քաղաքը: Մարզի տարածքը կազմում է 2704 քկմ [15]:

Բնությունը: Տավուշի մարզն իր աշխարհագրական դիրքի շնորհիվ աչքի է ընկնում բնության բազմազանությամբ:

Լեռնագրությունը: Ֆիզիկաաշխարհագրական առումով Տավուշի մարզը գտնվում է Հայկական լեռնաշխարհի խոշոր լեռնագրական միավոր Փոքր Կովկասի լեռնահամակարգի

արտաքին շարի՝ Գուգարաց, Միափորի լեռնաշղթաների և նրանց լեռնաբազուկների (Ոսկեպար, Մթնասար, Իջևան, Պայտասար, Հախում, Կենաց, Տավուշ, Խնձորուտ) վրա [5]: Դրանցից կենտրոնական դիրք են գրավում Գուգարաց լեռները, որոնք ջրբաժան են Կուրի Դեբեդ և Աղստև վտակների միջև: Մարզի ռելիեֆի բնորոշ գծերից են ուղղաձիգ քարափային լանջերը, սեղանաձև լեռնակատարները (հատկապես Իջևանի տարածաշրջանում), 200-600 մ խորությամբ ձորերն ու կիրճերը, խիստ մասնատված մակերևույթը (տիրապետող են 12°-ից բարձր թեքության լանջերը): Տարածքի մեծ մասն ունի 800-1700 մ բարձրություն: 2000 մ և ավել բարձրության տարածքները կազմում են մարզի ընդհանուր տարածքի ընդամենը 5-10%, իսկ ցածրադիր գոտին կազմում է մարզի տարածքի մոտ 15%-ը: Մարզի ցածրադիր կետը (Դեբեդավան գյուղ) գտնվում է ծովի մակարդակից 379 մ բարձրության վրա, իսկ բարձրադիր կետը՝ Մուրղուզ լեռը՝ 2993 մ [1;5]:

Բուսական և կենդանական աշխարհը: Չնայած մարզի ոչ բարձրադիր լինելուն, մարզում հանդիպում են լանդշաֆտային 5 գոտի՝ հետանտառային, անտառային, մարգագետնատափաստանային, մերձալպյան, ալպյան [1]: Թվարկված գոտիների բուսակենդանական աշխարհի թվաքանակով և բազմազանությամբ առանձնանում է անտառային գոտին, որը կազմում է մարզի տարածքի շուրջ 40,3%-ը (ՀՀ անտառային ֆոնդի շուրջ 30%-ը) և այս ցուցանիշով Տավուշը համարվում է ՀՀ ամենաանտառապատ մարզը [15]: Հիմնական ծառատեսակներն են հաճարենին, կաղնին, բոխին, լորենին, հացենին, թխկին, կեչին, գիհին, ընկուզենին և անտառային հատապտղավոր բույսերը (հոնի, վայրի տանձենի և խնձորենի, տխլենի և այլն): Մարզը հարուստ է նաև բազմաթիվ թեյաբույսերով՝ մապենի, ուրց, դաղձ և այլն: Կենդանական աշխարհը նույնպես բազմազան է: Մարզում տարածված են կովկասյան եղջերուն, բժավոր եղջերուն, եվրոպական այծյամը, գորշ արջը, այծյամը, նապաստակը, գայլը, աղվեսը, լուսանը, գորշուկը, կզաքիսը, սկյուռը, փորսուղը, եղնիկը, վարազը և այլն: Մարզում տարածված են նաև տարբեր թռչնատեսակներ՝ սուզակներ, բադեր տառեխներ, որորներ, կկուններ, բու, այծկիթ և այլն [5]:

Քանի որ բուսակենդանական աշխարհի մի մասը զրանցված է ՀՀ Կարմիր գրքում, այդ իսկ պատճառով մարզում ստեղծվել են նաև բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ), այդ թվում՝ մեկ ազգային պարկ (Դիլիջանի), 5 արգելավայր (Իջևանի, Արջատիլենու, Գանձաքարի-Վերին Աղդանի, Գետիկի, Զիկատարի) և 2 դենդրոպարկ (Իջևանի դենդրոպարկ, Բերդի սորաններ): ԲՀՊՏ-ները կազմում են մարզի ընդհանուր տարածքի շուրջ 12%-ը [1;2]:

Կլիման: Տավուշի մարզի կլիման բարեխառն է՝ չափավոր տաք ամառներով և մեղմ ձմեռներով, իսկ հյուսիսային և հյուսիս-արևելյան ցածրադիր գոտիներն աչքի են ընկնում չոր մերձարևադարձային կլիմայով: Մարզն ունի մեղմ կլիմա, թթվածնով հարուստ լեռնային մաքուր և բուժիչ օդ: Ընդ որում, լեռնագրական առանձնահատկություններով պայմանավորված, մարզի հարավային և հյուսիսային մասերը կլիմայական պայմանների առումով բավականին տարբերվում են: Հյուսիսային մասերում ձմեռը տաք է, սակավաձյուն, ամառամած օրերը՝ քիչ: Հունվար ամսվա միջին ջերմաստիճանը՝ 0.0-0.5°C է: Ամռանը բավական շոգ է, հուլիսի ամսվա միջին ջերմաստիճանը կազմում է 23-24°C, բացարձակ առավելագույնը հասնում է 36°C -ի: Տեղումները տարվա ընթացքում կազմում են 500-600 մմ: Մարզի հարավային մասերում օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 6-7°C: Ձմռանը ցրտերը չափավոր են, հունվար ամսվա միջինը կազմում է -5°C: Ամռանը զով է, շոգը՝ չափավոր (32°C): Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը կազմում է 600-750 մմ [5]:

Մարզում ձնածածկույթի հզորությունը տնտեսապես օգտագործելի բարձրություններում տատանվում է 10-75 սմ-ի սահմաններում: Մարզում է դիտվել ՀՀ-ում ամենաշատ ամառամած

² Մարզում հանդիպող բույսերից շուրջ 50-ը և թվարկված կենդանիների զգալի մասը զրանցված են ՀՀ Կարմիր գրքում [3]:

օրերի քանակը՝ 64 օր (Իջևան): Արևափայլի տարեկան տևողությունը 1900-2000 ժամ է: Մարզում դիտվում են տարվա 4 եղանակները:

Ջրագրությունը և բալնեոլոգիական ռեսուրսները: Մարզի ջրագրական ցանցը պատկանում է Կուր գետի ավազանին: Խոշոր գետերից են հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք հոսող Աղստը և ծայր հյուսիս-արևմուտքում փոքր ավազան զբաղեցնող Դեբեդը: Մյուս գետերից առանձնանում են Ոսկեպարը, Հախումը, Տավուշը, Խնձորուտը: Մարզում կան նաև լճեր՝ Պարզ, Ժանգոտ, Գոշի լիճը: Մարզը հարուստ է նաև հանքային ջրերով: Մարզում կան նաև ջրվեժներ: Խնձորուտի վրա է գտնվում 15 մ բարձրությունից թափվող Շառաչ ջրվեժը (Բայդուշի ձորում): Խաչաղբյուր գետի վրա՝ Ենոքավան գյուղից 3 կմ հեռավորության վրա է գտնվում Լաստիվեր ջրվեժը:

Մարզը հարուստ է նաև հանքային բուժիչ ջրերով, որոնցից հիմնականում օգտագործվում են միայն Դիլիջան քաղաքի շրջակայքում գտնվողները (Դիլիջան Ֆրոլովա, Թթու ջուր), հայտնի են նաև Ակնաղբյուրի, Վազաշենի, Ոսկեպարի, Բլդանի հանքային ջրերը: Մարզում են գտնվում թվով 5 ջրամբարներ՝ Ջողազի (45 մլն խմ), Հախումի (12 մլն խմ), Տավուշի (5 մլն խմ), Այգեձորի (4 մլն խմ) և Խաչթառակի (0.12 մլն խմ), որոնք հիմնականում օգտագործվում են ոռոգման նպատակով: Ջողազի ջրամբարը չի օգտագործվում սահմանային լինելու պատճառով, մնացած ջրամբարները ևս սահմանային են և մասամբ են օգտագործվում[2]:

Բնության հուշարձաններ: Մարզը հարուստ է նաև բնության հուշարձաններով, որոնք ըստ ծագման բաժանվում են երկու խմբի՝ կենսաբանական և երկրաբանա-գեոմորֆոլոգիա-կան: Կենսաբանական խմբի մեջ մտնող հայտնի հուշարձաններից են՝ Սարիգյուղի սոսին, Վ. Մամիկոնյանի կաղնին, Անտառի արքա (Դիլիջանում), Ջորականի սոսին [6]:

Իսկ երկրաբանա-գեոմորֆոլոգիական խմբի հայտնի հուշարձաններից են՝ Զինչինի սանդղափուլ քարափները, կվարցային պլագիոպորֆիրների պյունաձև անջատումները, Փայտասարի և Լաստիվերի քարանձավները, Գետահովտի մամռապատ ժայռը, Մոլլաքարի ժայռը, Քարաբլիթի ժայռը, Սառցատունը, Լուսաձորի և այլն, :

Տնտեսությունը: 2018թ.-ին ՀՀ Տավուշի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են՝ արդյունաբերություն՝ 0,8%, գյուղատնտեսություն՝ 4,4%, շինարարություն՝ 3,9%, մանրածախ առևտուր՝ 2,5%, ծառայություններ՝ 1,0% [15]:

Մարզը հանրապետության վառ արտահայտված գյուղատնտեսական շրջաններից է: Մարզի հիմնական գյուղատնտեսական հողերը կազմում են վարելահողերը՝ 25588,4 հա, արոտավայրերը՝ 63065,6 հա ու խոտհարքները՝ 9401,3 հա: Անասնաբուծության մեջ առաջատար ճյուղեր են համարվում խոշոր եղջերավոր անասնաբուծությունն ու խոզաբուծությունը, իսկ բուսաբուծության մեջ՝ հացահատիկային մշակաբույսերի մշակությունն ու խաղողագործությունը: Վերջին տարիներին իրագործված բազմաթիվ խթանող գյուղատնտեսական ծրագրերի շնորհիվ մեծ զարգացում է ապրում պտղաբուծությունը, ինչով մարզը նախկինում մեծ համբավ է վայելել: Տարեցտարի զարգացում է ապրում նաև մեղվաբուծությունը [2;15]:

Մարզի տնտեսության առաջատար ճյուղը մշակող արդյունաբերությունն է: Առավել զերակշռող են սննդի արդյունաբերությունը և փայտամշակումը: Մարզում արտադրվող արդյունաբերական արտադրանքից արտաքին շուկա են հանվում գինիներ, պահածոներ, հանքային ջուր, քարե և փայտե, վերջերս նաև տեքստիլ արտադրատեսակներ:

Մարզի հիմնական գործատուները համարվում են՝ «Իջևանի Բենտոնիտ» ԲԲԸ (հանքարդյունաբերություն), «Քարարտ» ՍՊԸ (քարի վերամշակում), «Իջևանի օդու, գինու և պահածոների գործարան» (օդու, գինու և պահածոների արտադրություն), Երևանի «Արարատ» կոնյակի գործարանի Բերդի մասնաճյուղ (կոնյակի սպիրտի արտադրություն), «Տավուշտեքստիլ» ՍՊԸ (կարի ֆաբրիկա), Դիլիջան հանքային ջրերի գործարան (հանքային ջրերի գործարան), «ԴԻԼԻ» ՍՊԸ (անասնապահություն և կաթի վերամշակում), «Մասիս տոբակո» ՍՊԸ (ծխախոտի վերամշակում) [2]:

Բնակչությունը: Տավուշի մարզը հանդիսանում է ՀՀ ոչ խիտ բնակեցված մարզերից մեկը: Մարզի բնակչությունը կազմում է 123 500 մարդ (2018 թ.), որից քաղաքային՝ 42,3%, գյուղական՝ 57,7%: Մարզում կան 5 քաղաք և 61 գյուղ, 24 համայնք (2018 թ.): Մարզի 47 բնակավայրեր սահմանամերձ են Ադրբեջանին և ունեն ռազմավարական կարևոր Նշանակություն: Միննույն ժամանակ մարզի բնակչության շուրջ 30% գտնվում է 2 բնակավայրերում՝ Իջևան և Դիլիջան քաղաքներում: Տղամարդիկ կազմում են բնակչության 47,9%-ը, կանայք՝ 52,1%-ը: Տավուշի մարզի տնտեսապես ակտիվ բնակչության թիվը կազմում է 65,3%: Մարզում գործազրկության մակարդակը զգալիորեն ավելի ցածր է քան միջին հանրապետական ցուցանիշը, սակայն այդ ցուցանիշը երիտասարդության համար զգալիորեն ավելի բարձր է, քան միջին հանրապետականը: Զբաղվածության մակարդակը զգալիորեն ցածր է քաղաքային համայնքներում: Ինչը բացատրվում է նրանով, որ բարձր զբաղվածությունն ապահովողն է հիմնականում գյուղատնտեսությունը, որում զբաղվածների թիվը գերազանցում է 30 000-ը [2;15]:

Կրթություն և մշակույթ: Մարզում 2018 թ. դրությամբ գործում է 63 պետական նախադպրոցական, 81 պետական հանրակրթական հաստատություն: Տավուշի մարզում գործում է ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ գործող մեկ նախնական (արհեստագործական) և վեց միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ: ՀՀ Տավուշի մարզում գործում է պետական ԲՈՒՀ-երի 2 մասնաճյուղ՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը և Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Դիլիջանի մասնաճյուղը: 2014թ. սեպտեմբերից գործում է «Դիլիջանի ինտերնեյշնլ սքուլ օֆ Արմենիա» միջազգային դպրոցը, իսկ 2013թ. սեպտեմբերից՝ «Այբ» դպրոցների ընտանիքին պատկանող Դիլիջանի կենտրոնական դպրոցը՝ կից ֆաբլաբով, ինչպես նաև Դիլիջանի Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը (ևս երկու նմանատիպ կենտրոն կառուցման փուլում են Կողբում և Բերդում): Տավուշի մարզում գործում են արվեստի 1 պետական քոլեջ (կրթության նախարարության ենթակայությամբ), 11 երաժշտական, գեղարվեստի և արվեստի 5 դպրոց, 32 մշակույթի տուն և ակումբ, 1 մարզային և 65 քաղաքային ու գյուղական գրադարան, 4 զբոսայգի, 1 մշակույթի և ժամանցի կենտրոն («Ավանդույթ» ՓԲԸ), 2 պատկերասրահ (Իջևանի «Վերնատուն, Դիլիջանի), ժողովրդական նվագարանների 4 համույթ, 5 թանգարան (Դիլիջանի երկրագիտական, Դիլիջանի ժողովրդական արվեստի (Հ.Շարամբեյանի), Կողբի, Բերդի պատմության և կենցաղի, Իջևանի պատմաերկրագիտական թանգարաններ), «Դիլիջան» կոմպոզիտորների ստեղծագործական տուն (գործում է մասնակի) [2;15]:

Պատմամշակութային ռեսուրսները: Տավուշի մարզը հարուստ է նաև պատմամշակութային օբյեկտներով, որոնց շարքին են դասվում *ամրոցները և բերդերը* (Տավուշ, Մանթաշ, Բուդուր, Գավարզին, Գագա, Բերդաքար, Ուզունթալայի դիտաշտարակ ամրոցաձև շենք, Թանիկ, Աղջկաբերդ, Աշոտ Երկաթ, Կայան, Բերդավան), *եկեղեցիները և վանքերը* (Հաղարծին, Առաքելոց, Դեղձնուտ, Սամսոն, Սրվել, Կիրանց, Մակարավանք, Ջուխտակ վանք, Մաթոսավանք, Գոշավանք, Մորու ձոր կամ Ծովզ վանք, Շխմուրադի վանք, Վարագավանք, Կապտավանք, Աղավնավանք, Խորանաշատ վանական համալիր), *խաչքարերը և մահարձանները* (Կիրանց, Բերքաբեր, Գանձաքար, Գոշ, Հաղարծին, Քնած խաչքարեր՝ Բերդում, Միսիթար Գոշի մահարձան, Մշկավանք), *քարավանատները* (Առաքելոց գյուղատեղի), կամուրջները (Մալահ, Սրանոց), *արհեստները* (գորգագործություն, ասեղնագործություն, ժանեկագործություն, փայտամշակություն, քարագործություն-քանդակագործություն, գինեգործություն), *տոներ-ավանդույթներ* (Վարդավառ, Նուրի-նուրի, Չոբանի օր, Եդի օրեր), խաղերը (Ջջլախտի (տղաների խաղ), Կլասի, Կոխ, Քարկտիկ (տյապկի), Թելով խաղ, Սիբրի, Պարան (2+1), Զիլկի, Իշկսրուկի), *հնավայրերը* (Հովք), *խոհանոցը* (հոնասպաս, դոմաքաշովի, ուրցի խորոված, կոնչոլ, լոբիով սպաս, փթռուկ, մոխոխ, գառան արյուն, գառան խաշլամա, խաշիլ, խաթխաշ, ճմբուռ, և այլն) [1;6;7;8]:

Զբոսաշրջային ենթակառուցվածքները և առաջարկները: Մարզի զբոսաշրջային հիմնական ենթակառուցվածքների շարքին են դասվում գիշերակացի և սննդի կազմակերպման

ձեռնարկությունները, հանգստի կազմակերպման համալիրները և տարածքները (հանգստի գոտիներ, համալիրներ): Տավուշի մարզում ներկայումս գործում է շուրջ 130 գիշերակացի ձեռնարկություն (44 հյուրանոց և 86 հյուրատուն), որոնցից 60%-ը գտնվում է Դիլիջանի, 18%-ը Իջևանի, 14%-ը Նոյմեբերյանի, 8%-ը Բերդի տարածաշրջանում: Տավուշի մարզում գործում է շուրջ 104 սննդի կազմակերպման ձեռնարկություն (71 ռեստորան, 33 սրճարան), որոնցից 37%-ը գտնվում է Դիլիջանի, 28%-ը Իջևանի, 24%-ը Նոյմեբերյանի, 12%-ը Բերդի տարածաշրջանում: Մարզում գործում են նաև հանգստի կազմակերպման 6 համալիրներ (Պարզ լիճ, Քարի լիճ, Լաստիվեր, Ապագա ռեզորթ, Ալանդ ռեզորթ, Մենուա) և մոտ երեք տասնյակ հանգստի գոտիներ (Ադստև գետի հովտում): Մարզում յուրահատուկ զբոսաշրջային ենթակառուցվածք են առողջարանները, որոնցից ներկայումս գործում է միայն «Լեռնային Հայաստան»-ը (Դիլիջան քաղաքում, ՊՆ ենթակայության): Բացի վերոնշյալից մարզի զբոսաշրջային առաջարկները ներկայանում են նաև էկոլոգիական երթուղիների (Դիլիջանի տարածաշրջան), լեռնահեծանվային երթուղիների (Դիլիջանի տարածաշրջան), քայլարշավային արահետների (Դիլիջանի, Բերդի, Իջևանի տարածաշրջաններ) և Տրանսկովկասյան արահետի (հիմնականում Դիլիջան ազգային պարկի տարածքում), ձիարշավների (հիմնականում Իջևանի տարածաշրջան) տեսքով: Յուրահատուկ զբոսաշրջային առաջարկներ են Աչաջուր գյուղում նորաբաց գինու բակը և տարբեր բնակավայրերում տեղացի բնակիչների կողմից արտադրվող տարատեսակ հուշանվերները: Տավուշի մարզում կազմակերպվում են նաև փառատոններ (Ենոքավանում՝ ՀայԲույս և Յելլ Էքստրիմ, Դիլիջանում՝ Բարդ ու Արվեստների և արհեստների, Բերդում՝ Մեղրի և հատապտղի, Իջևանում՝ Հայկական էքստրիմ փառատոն): Հաղարծին վանական համալիրը բացի պասիվ-ճանաչողական կրոնական զբոսաշրջությունից, առաջարկում է նաև ակտիվ-ճանաչողական զբոսաշրջություն՝ «Ապրիլ ինչպես վանական» զբոսաշրջային արտադրանքի տեսքով: Մարզին բնորոշ զբոսաշրջային յուրահատուկ ռեսուրս է համարվում հուշադրյուրների կառուցման մշակույթը (Նոյմեբերյանի և Բերդի տարածաշրջաններ), որտեղ (հուշադրյուրներում) ցանկացած ոք կարող է կազմակերպել իր ընտանիքի և ընկերների հետ մեկօրյա հանգիստ (անվճար) [8]:

ՀՀ-ում գործող զբոսաշրջային ձեռնարկությունները (օպերատորները/գործակալները) իրենց զբոսաշրջային փաթեթներում հիմնականում առաջարկում են Հաղարծին, Գոշավանք վանական համալիրները, Գոշ և Պարզ լճերը, Դիլիջան քաղաքը, Լաստիվերը և Ենոքավանը (պասիվ/ճանաչողական զբոսաշրջություն համար) [9]: Առաջարկվող զբոսաշրջային փաթեթների 80%-ը սահմանափակվում է Դիլիջանի տարածաշրջանով և այցելությունները գրեթե 100%-ով (խմբերի համար) կազմակերպվում է մեկ օրով, իսկ երկու օրանոց տուրերը հիմնականում կազմակերպվում են անհատական տուրերի և սոցփաթեթներով այցելությունների դեպքում: Այցելությունները գրեթե 100%-ով տեղի են ունենում մայիս-սեպտեմբեր ամիսներին՝ կազմակերպված տուրերի դեպքում և 90%-ով՝ ինքնակազմակերպ այցելությունների դեպքում: Ներկայումս մարզ տարեկան այցելում է մոտ 300 000 ներգնա զբոսաշրջիկ, որից 13%-ը այցելում է կազմակերպված, իսկ 87%-ը ինքնակազմակերպ կերպով:

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տավուշի մարզի զբոսաշրջության ներուժի վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզում առկա են զբոսաշրջության զարգացման համար հետևյալ առանցքային ուժեղ կողմերը:

Ուժեղ կողմ 1.

Տարանցիկ տրանսպորտաաշխարհագրական դիրքը և միջպետական սահմանի առկայությունը՝ տարեկան ավելի քան 8 մլն այցելու ունեցող Վրաստանին հարևանությունը:

Նշանակություն

Ռեզիդուալ նշանակության միջազգային զբոսաշրջային փաթեթների մշակում և վրաստանյան զբոսաշրջային տուրօպերատորական/տուրգործակալան ձեռնարկությունների հետ համագործակցության հնարավորություն:

Ուժեղ կողմ 2

Դեպի մարզ թե՛ Երևանից, թե՛ Թբիլիսիից տրանսպորտային մատչելիությունը (երկու քաղաքներից, միջինում, գրեթե նույն հեռավորության վրա գտնվելը):

Նշանակություն

Երկու քաղաքներից դեպի մարզ ավտոճանապարհները (ցամաքով մարզ հասնելու միակ հնարավորությունը) հիմնականում (բացառությամբ երկու հատվածի՝ Դիլիջան և Ոսկեպար) անցնում են սարավանդներով և գետահուններով, որի շնորհիվ տրանսպորտային միջոցներով տեղափոխությունը զբոսաշրջիկների համար համարվում է հարմար, ի տարբերություն ՀՀ մյուս նմանատիպ պայմաններով մարզերի, որտեղ շատ են լեռնային ոլորանները:

Ուժեղ կողմ 3.

Մեղանաձև դյուրամատչելի լեռնակատարների առկայությունը (հիմնականում Դիլիջանի և Իջևանի տարածաշրջանում)

Նշանակություն

Էքսուրեմալ զբոսարջության տարատեսակ համարվող պարապլանիզմի զարգացման և այդ զարգացումն ապահովող ենթակառուցվածքների ստեղծման հնարավորություն է, ինչպես նաև ՀՀ տարածքում ինքնաթիռներով զբոսաշրջային շրջագայությունների ժամանակ վայրէջքների ապահովման բնական հնարավորություն է: Այս տարածքները բարձրանալը նաև հեշտ է , որը լրացուցիչ առավելություն է տալիս օդային զբոսաշրջությամբ զբաղվելու համար անրաժեշտ սարքերը և տեխնիկան հեշտությամբ բարձրացնելու համար:

Ուժեղ կողմ 4

Լեռների մեղմաթեք և ոչ բարձրադիր լինելը

Նշանակություն

Տավուշի լեռներն իր տարբերությունն ՀՀ մյուս նմանատիպ մարզերի, առավել հեշտ է բարձրանալ, որը կարող է դիտարկվել որպես «փափուկ» լեռնագնացության զարգացման հնարավորություն: Ընդ որում «փափուկ» լեռնագնացությունը հատուկ ֆիզիկական պատրաստվածություն չի պահանջում զբոսաշրջիկից, որի շնորհիվ հնարավոր է մեծ թվով զբոսաշրջիկների ներգրավել և նպաստել տեղացի ուղեկցորդների գործունեության զարգացմանը:

Ուժեղ կողմ 5.

200-600 մ խորությամբ ձորերի և կիրճերի առկայությունը:

Նշանակություն

Նմանատիպ ռելիեֆի առկայությունը զբոսաշրջային հատուկ տեսակի տրանսպորտային ենթակառուցվածքի՝ զիփլայնների և ճոպանուղիների, կառուցման հնարավորություն է:

Ուժեղ կողմ 6.

Ցածրադիր և բարձրադիր կետերի միջև բարձրությունների տարբերությունը 2614 մ է բայց այստեղ բնակլիմայական պայմաններն աչքի են ընկնում բազմազանությամբ (5 լանդշաֆտային և 4 կլիմայան գոտիներ, վառ արտահայտված տարվա չորս եղանակներ):

Նշանակություն

Նմանատիպ պայմանի առկայությունը զբոսաշրջիկին հնարավորություն է տալիս մարզի ոչ մեծ տարածքում զգալ ՀՀ գրեթե բոլոր լանդշաֆտային գոտիների շունչը, ընդ որում, թե՛ հետիոտն, թե՛ տրանսպորտային միջոցներով այն հեշտ իրականանալի է առկա դյուրամատչելի ռելիեֆի շնորհիվ: Այս առավելությունը նաև տերրաստրեքայիայի (մարդկանց բնության տեսարաններով բուժելու՝ հոգևոր և ֆիզիկական առողջությունը վերականգնելու) զարգացման հնարավորություն է (համադրվում է 7-րդ առավելության հետ):

Ուժեղ կողմ 7

Թթվածնով հարուստ և լեռնային մաքուր օդի առկայությունը՝ (կլիման առողջարար է սիրտ-անոթային և շնչառական օրգանների համար):

Նշանակություն

Ներկայիս հետինդուստրիալ դարաշրջանում, երբ հատկապես քաղաքային միջավայրում մարդիկ գերզբաղված են լինում, որն արտայատվում է նրանց ֆիզիկական առողջության վատացման և գերհոգնածության տեսքով, մարզը հնարավորություն է տալիս նմանատիպ խնդիրներով տառապող մարդկանց և՛ բուժելու, և՛ պրոֆիլակտիկ վերականգնողական կուրսեր անցնելու: Վերջինիս իրականացմանը նպաստում են նաև գործող առողջարանները:

Ուժեղ կողմ 8

Կլիմայի մեղմությունը:

Նշանակություն

Հատկապես ամռան տապից խուսափելու համար շաքաթվա հանգստյան օրերին մարզում գովանալու հնարավորություն է ապահովում:

Ուժեղ կողմ 9.

Թեյարույսերի առատությունը:

Նշանակություն

Տեղական հատուկ թեյերի արտադրությունը և դրանք, որպես ապրանք/հուշանվեր, զբոսաշրջիկներին վաճառելը:

Ուժեղ կողմ 10

ՀՀ ամենաանտառապատ մարզ լինելը (մակերեսի ավելի քան 40%-ը):

Նշանակություն

Էկոլոգիական նշանակության զբոսաշրջային երթուղիների կազմակերպման հնարավորություն: Ինչպես նաև, աշնանը հատուկ տուրերի կազմակերպման հնարավորություն է՝ տավուշյան աշունը վայելելու համար («Գնանք տեսնենք աշունը» տուրեր):

Ուժեղ կողմ 11

Բնության հատուկ պահպանվող տարածքների առկայությունը:

Նշանակություն

Ամերիկյան մոդելով էկոլոգիական զբոսաշրջության կազմակերպման հնարավորություն է, այսինքն՝ իիստ կազմակերպված և բնապահպանական նորմերը հաշվի առնող զբոսաշրջային տուրերի կազմակերպում բնության հատուկ պահպանվող տարածքներում: Միաժամանակ այս տարածքները համարվում են գիտահետազոտական միջավայրեր, որը գիտական ուղղվածության էկոլոգիական զբոսաշրջության զարգացման հնարավորություն է:

Ուժեղ կողմ 12

Հանքային բուժիչ ջրերով հարուստ լինելը:

Նշանակություն

Մարզի հանքային ջրերը հնարավորություն են տալիս զարգացնել մարզում բալնոլոգիական զբոսաշրջությունը՝ դարձյալ հատկապես սիրտ-անոթային հիվանդությունների կանխարգելման կամ բուժման համար: Ընդ որում, քանի որ մարզի նմանատիպ ռեսուրսները գտնվում են Դիլիջանում, որտեղ բացարձակ բարձրությունը տատանվում է 1100-1500 մ սահմաններում, Դիլիջանը դառնում է ավելի գրավիչ նմանատիպ զբոսաշրջային ուղղության համար, քանի հատկապես արյան ճնշման խնդիրներ ունցողների համար այստեղ ավելի համրմարավետ է:

Ուժեղ կողմ 13

Անտառապատ շրջակայք ունեցող ջրամբարները և մեղմաթեք գետի առկայությունը:

Նշանակություն

Այս ջրամբարները (հիմնականում Տավուշ, Խնձորուտ), որոնք համադրված են անտառային լանդշաֆտի հետ, հիանալի հնարավորություն են մարդկանց կարճաժամկետ հանգստի կազմակերպման և դայվինգների իրականացման համար: Իսկ գետերը (Աղստև) «փափուկ» ռաֆտինգի զարգացման հանարավորություն է, որը հատկապես Իջևան քաղաքին զբոսաշրջային սեզոնին նոր զբոսաշրջային միջավայր և շունչ կհաղորդի:

Ուժեղ կողմ 14

Քարանձավների առկայությունը:

Նշանակություն

Արկածային և հնագիտա-ազգագրական զբոսաշրջության զարգացման հնարավորություն է:

Ուժեղ կողմ 15

ՀՀ 4 խաղողագործական շրջաններից մեկը լինելը:

Նշանակություն

Մարզը հայտնի է իր խաղողագործական պատմությամբ և Իջևանու գինու գործարանով ու վերջերս վերաբացված Բերդավանի գինու գործարանով, որի շնորհիվ մարզում գինու զբոսաշրջության կազմակերպման հնարավորություն է ստեղծվում:

Ուժեղ կողմ 16

ՀՀ-ում յուրահատուկ պտղաբուծության (հատկապես անուշաբույր և անուշահամ տեղական դեղձ) շրջան լինելը:

Նշանակություն

Ամառային սեզոնին տեղի պտղաբուծական այգիները յուրահատուկ ռեսուրս են զբոսաշրջիկների համար այցելությունների կազմակերպման և էկոլոգիակապես մաքուր մրգերի ու սննդի համատեման համար:

Ուժեղ կողմ 17

Համապետական նշանակության պատմամշակութային կոթողների առկայությունը:

Նշանակություն

Այս կոթողները բարձրացնում են մարզի պատմական արժեքը՝ մասնավորապես Հաղարծնի և Գոշավանքի վանական համալիրները, բացի ներկայումս մարզի նմանատիպ ռեսուրսների միայն ճանաչողական զբոսաշրջային օգտագործումից, ուխտագնացության զարգացման հնարավորությունն են տալիս:

Ուժեղ կողմ 18

Տեղական յուրահատուկ ավանդույթները:

Նշանակություն

Հատկապես Վարդավառի տոնը յուրահատուկ սեզոնային զբոսաշրջային ապրանք կարող է դառնալ, քանի որ այդ տոնի յուրահատուկ նշումը (տեղական սննդով, խաղերով, երգ, երաժշտությամբ՝ համադրված ջրելու սովորույթի հետ) բնորոշ է մարզին: Ընդ որում, քանի որ այն մարզի տարբեր բնակավայրերում նշվում է տարբեր օրերի, ապա հնարավորություն է տալիս մեկ ամբողջ ամիս (հուլիս) դառնալ գործող զբոսաշրջային առաջարկ կամ կազմակերպել նաև թատերականացված Վարդավառ:

Ուժեղ կողմ 19

Հնագիտական տարածքների առատությունը:

Նշանակություն

Մարզի տարածքը հնագիտության տեսանկյունից դեռևս թույլ է ուսումնասիրված, բայց վերջին տարիների ուսումնասիրությունների արդյունքները, հատկապես Հովք գյուղին հարակից տարածքներում կարող են զբոսաշրջության այս տեսակի զարգացման հնարավորություն դառնալ:

Ուժեղ կողմ 20

Տեղական և միջազգային նշանակության մշակույթի օջախների առկայությունը:

Նշանակություն

Մարզը յուրահատուկ միջազգային և տեղական նշանակության մշակութային տարածք է և նվազագույնը նշված երկու մշակութային օջախները հնարավորություն են ընձեռում մարզում մշակութային ուղղվածության զբոսաշրջության զարգացման համար, ընդ որում Կոմպոզիտորների տունը կարելի է համադրել՝ մշակութային և պրոֆիլակտիկ առողջարանային զբոսաշրջության համար, քանի որ առկա բնակլիմայական պայմանները, որոնք օգտագործվել են նույնիսկ ԽՍՀՄ տիեզերագնացներին տիեզերք ուղարկելուց առաջ նախապատաստելու համար, նման համադրման հիանալի հիմք են համարվում:

Ուժեղ կողմ 21

Տեղական և միջազգային մեծ նշանակության կրթական կենտրոնների առկայությունը:

Նշանակություն

Այս կենտրոններն իրենց ենթակառուցվածքներով միջազգային, ինչու ոչ, նաև տեղական նշանակության կրթական ծրագրերի իրականացման հնարավորություն են և կրթական ուղղվածության զբոսաշրջության զարգացման նախադրյալ:

Ուժեղ կողմ 22

ՀՀ զբոսաշրջության մասնագետներ պատրաստող բուհերում բարձր առաջադիմություն ունեցող տավուշցի մեծ թվով ուսանողները:

Նշանակություն

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համապատասխան բուհերում սովորող մարզի ուսանողներն աչքի են ընկնում բարձր առաջադիմությամբ, ինչպես նաև մարզում առկա ԵՊՀ մասնաճյուղում պատրաստվող կադրերը ստանում են զբոսաշրջության մասնագետ որակավորումը, հետևաբար մարդկային ռեսուրսների առումով մարզում կան «սյուներ», որոնց վրա կարելի է հենվել զբոսաշրջության զարգացման համար:

Ուժեղ կողմ 23

Գործող հանգստի գոտիները և համալիները:

Նշանակություն

Մարզում առկա հանգստի գոտիները, իսկապես յուրահատուկ են իրենց գեղատեսիլությամբ և գրավչությամբ՝ ամբողջությամբ համադրված ջրային և անհատառային օբյեկտներով, որոնք հանգստյան օրերի զբոսաշրջության հնարավորություն են տալիս: Այսինքն՝ տեսանելի ժամանակահատվածում մարզի զբոսաշրջային հոսքերի ավելացման համար, որպես ռազմավարական մարկետինգային հնար, պետք է շեշտադրվի մարզի հենց այս առավելությունը՝ հանգստյան օրերի զբոսաշրջությունը:

Ուժեղ կողմ 24

Էկոլոգիակապես մաքուր և անտառապատ բնական միջավայրում գտնվող միջազգային և հայկական ցանցային հյուրանոցները:

Նշանակություն

Մարզում Բեսթ Վեսթերն և Թուֆենկյան ցանցային հյուրանոցների առկայությունը բարձրացնում է մարզի միջազգային զբոսաշրջային իմիջը և հնարավորություն տալիս հատկապես գործարար զբոսաշրջության զարգացման համար:

Ուժեղ կողմ 25

Արդեն իսկ մշակված զբոսաշրջային արահետների առկայությունը և միջազգային նշանակության Տրանսկովկասյան արահետի մարզի տարածքով անցնելը:

Նշանակություն

Մարզն ունի արդեն իսկ առաջարկվող էկոտուրիստական և արշավային երթուղիներ, որոնք հնարավորություն են տալիս զբոսաշրջիկին նախօրոք տեղեկանալ իրենց այցելվող տարածքների մասին և, որ ամենակարևորն է, իրենց զգալ անվտանգ (կազմակերպված լինելու շնորհիվ):

Ուժեղ կողմ 26

«Ապրիլի ինչպես վանական» ՀՀ-ում միակ զբոսաշրջային առաջարկի առկայությունը:

Նշանակություն

Այս յուրահատուկ զբոսաշրջային առաջարկը միակն է ՀՀ-ում, որտեղ յուրքանաչուր ոք կարող է զգալ վանականի կյանքը՝ բոլոր կողմերից:

Ուժեղ կողմ 27

Առաջնային նշանակությունը կորցրած և այլևս չօգտագործվող մարզի տնտեսական ենթակառուցվածքները:

Նշանակություն

Մասնավորապես մարզի տարածքում գտնվող և չօգտագործվող երկաթուղին, որը յուրահատուկ զբոսաշրջային գրավչության կարելի է դարձնել մարզում նոր զբոսաշրջային առաջարկներ ներկայացնելու համար:

Ուժեղ կողմ 28

Մարզի մարգագետնատափաստանային և այսպան գոտիներում գտնվող տեղի բնակչության սեզոնային կացարանները:

Նշանակություն

Այս կառույցները (տնակները և հարակից կառույցները) զբոսաշրջիկների համար հնարավորություն են ստեղծում այսպես ասած, տեղական և բնությանը մոտիկ կյանքով ապրելու ու քաղաքային, ինդուստրիալիզացված, գլոբալիզացված միջավայրից կտրվելու համար:

**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ , ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՐԱՎՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ ԵՎ
ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ**

Տավուշի զբոսաշրջության ներուժի լիարժեք և կայուն օգտագործման համար անհրաժեշտ է լուծել զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող խնդիրները [8], որոնք ըստ ծագման միջավայրի դասակարգված են ստորև բերված աղյուսակում: Աղյուսակ 1-ը ցույց է տալիս նաև այդ խնդիրների լուծման հնարավոր պատասխանատուներին և առաջարկվում են լուծման հնարավոր տարբերակներ:

Աղյուսակ 1. Տավուշի մարզի զբոսաշրջության զարգացման խնդիրները, լուծման հնարավոր պատասխանատուներ և տարբերակներ

Հ/հ	Խնդրի տեսակը	Կոնկրետ խնդիրը	Հնարավոր պատասխանատու	Լուծման հնարավոր տարբերակներ
1.	Բնական	Սողանքների առատություն	ՏԻՄ-եր Արտակարգ իրավիճակների նախարարություն Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն	Կանխարգելիչ շինարարական և ինֆորմատիվ-խորհրդատվական (զբոսաշրջային ենթակառուցվածքներ ստեղծողներին) աշխատանքների իրականացում
		Բնակլիմայական պայմանների սեզոնայնություն	ՏԻՄ-եր Մարզում գործող զբոսաշրջային գործունեության ծավալող կազմակերպություններ Էկոնոմիկայի նախարարություն Զբոսաշրջության պետական կոմիտե	Նոր՝ զբոսաշրջային առաջարկների ներկայացում՝ - մարզի ոչ զբոսաշրջային սեզոնի ընթացքում գործարար հանդիպումների կազմակերպում - ձմեռային արձակուրդների ընթացքում կրթական ոչ ֆորմալ ծրագրերի իրականացում
2.	Բնապահպանական	Ծառահատումներ	Շրջակա միջավայրի նախարարություն «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ Տավուշի մարզպետարան ՏԻՄ ԵՊՀ ԻՄ	Անտառը որպես ոչ վառելափայտ և շինանյութ օգտագործելու գիտելիքների, հմտությունների և մտածելակերպի զարգացմանն ուղղված կրթական ծրագրերի իրականացում Օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկում Տեղական անտառապահպան խմբերի ստեղծում
		Շրջակա միջավայրի հիմնականում ֆիզիկական աղտոտվածություն (կարծր թափոններ, ամենուրեք թափված աղբ և գետային ռեսուրսների աղտոտում՝ կարծր նյութերով և կենցաղային, այդ թվում և զբոսաշրջային	Շրջակա միջավայրի նախարարություն ՏԻՄ-եր Տեղական կրթական և մշակութային հաստատություններ Տեղական կամավորական խմբակներ	Պարբերական շաբաթօրյակների կազմակերպում Բնապահպանական կրթական ծրագրերի կազմակերպում «Աղտոտողը վճարում է» սկզբունքի ներդրում Աղբավերամշակման գործարանի կառուցում կամ հավաքված աղբի տեղափոխում այլ մարզերում կառուցված նմանատիպ գործարան Աղբի կառավարման համակարգի ստեղծում (աղբի կազմակերպված տեղափոխում և կազմակերպված

		ենթակառուցվածքներից թափվող կոյուղաջրերով)		աղբավայրերի ստեղծում)
3.	Աշխարհա-քաղաքական	Սահմանամերձ տարածքների վրա կրակոցներ	Պաշտպանության նախարարություն Արտաքին գործերի նախարարություն	Պետական արտաքին քաղաքականության հզորացում
4.	Սոցիալ-տնտեսական	Ճանապարհների մասնակի անբարեկարգվածություն	Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն	Ճանապարհների որակյալ և պարբերական վերանորոգում
		Բնակչության արտագաղթ	Էկոնոմիկայի նախարարություն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Ֆինանսների նախարարություն ՏԻՄ-եր Տեղական գործատուներ	Մանր և միջին ձեռնարկատիրության զարգացում Գիտատար և ժամանակակից սերնդի մտածելակերպին ու ապագային միտված տեխնոլոգիացված աշխատատեղերի ստեղծում
		Խմելու ջրով վատ ապահովվածություն	«Հայջրմուղկոյուղի» ընկերություն	Եղած ենթակառուցվածքների բարելավում Բնակչության կողմից ջուրը խնայողաբար օգտագործելուն ուղղված կրթական ծրագրերի իրականացում
		Զբոսաշրջային ենթակառուցվածքների հիմնական ֆոնդի (շենք-շինությունների) տեխնիկական մաշվածություն	Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն	Եղած շինությունների վերանորոգում՝ պետական, մասնավոր կամ միջազգային ֆոնդերից, դրամաշնորհներից
5.	Իրավա-կան-օրենս-դրական	Հարկային քաղաքականություն (սեզոնայությունը հաշվի չի առնվում հարկ վճարելիս՝ զբոսաշրջային գործունեությամբ զբաղվող ձեռնարկությունների համար) ԱԱՀ հաշվացման խնդիր	ՀՀ Կառավարություն ՀՀ Ազգային ժողով Տավուշի մարզպետարան	Հարկային օրենսգրքում համապատասխան փոփոխությունների իրականացում՝ սահմանամերձության արտոնությունների բիզնեսի համար խնդիրներ առաջացնող կետերի վերանայում և օրենքում համապատասխան փոփոխության կատարում
6.	Կրթական	Միջին մասնագիտական	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի	Կրթական ծրագրերի վերանայում

		կրթական հաստատությունների հեղինակության ցածր մակարդակ	նախարարություն Տավուշի մարզպետարան Մարզի միջին մասնագիտական կրթական հաստատություններ Մարզի զբոսաշրջային խոշոր գործատուներ ԵՊՀ ԻՄ	Մասնագետների վերապատրաստում Այդ կրթական հաստատությունների տեղական, ազգային և միջազգային գործընկերների ցանցի մեծացում Պարբերական հանդիպումների կազմակերպում դպրոցներում՝ դեպի այս կրթական հաստատություններ աշակերտներին կողմորոշելու համար Դուրս կրթական համակարգի ներդրում
		Բիզնեսի և կրթական ծրագրերի առաջնահերթությունների ոչ միջտ համապատասխանություն	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Մարզի միջին մասնագիտական կրթական հաստատություններ ԵՊՀ ԻՄ Մարզի զբոսաշրջային խոշոր գործատուներ	Կրթական ծրագրերի վերանայում Բիզնեսի ներկայացուցիչներին որպես հրավիրյալ մասնագետներ դասախոսական, գործնական ժամերի տրամադրում Բիզնեսի հետ համատեղ կրթական-հետազոտական թեմաների իրականացում Կրթություն և բիզնես տարեկան աշխատաժողովի կազմակերպում
7.	Կառավարչակազմական	Մարզի մասին համակարգված և միասնական զբոսաշրջային տեղեկույթի բացակայություն	Մ Տավուշի մարզպետարան ԵՊՀ ԻՄ Տավուշի տուրիզմի զարգացման գործակալություն ՄԱԶԾ Տավուշի զբոսաշրջության զարգացման և հետազոտության կենտրոն Դիլիջանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն Զբոսաշրջության պետական կոմիտե	Մասնագիտական գիտելիքներ ունեցող կամավորական խմբակների ստեղծում և մարզի զբոսաշրջային գրավչությունների մասին ինտերնետ տիրություն ինֆորմացիայի տեղադրում
		Թվային միջավայրում մարզի ներկայացվածության ցածր մակարդակ և թվային տեխնոլոգիաների մարզի զբոսաշրջության ոլորտում ներդրվածության ցածր մակարդակ	Տավուշի մարզպետարան ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ Տավուշի տուրիզմի զարգացման գործակալություն ՄԱԶԾ Տավուշի զբոսաշրջության զարգացման և հետազոտության կենտրոն Դիլիջանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն Զբոսաշրջության պետական կոմիտե	Մարզի զբոսաշրջային ինֆորմացիայի թվայնացում՝ բջջային հավելվածների և այլ ծրագրերի ու թվային գործիքների տեսքով
		Զբոսաշրջային ցուցանակների	Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն	Մարզին բնորոշ կոլորիտով զբոսաշրջային ցուցանակների ստեղծում և գլխավոր

		բացակայություն կամ ոչ բավարար քանակ	Տավուշի մարզպետարան ՏԻՄ-եր Մարզի զբոսաշրջային խոշոր գործատուներ Դիլիջանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն	մայրուղիների ու տրանսպորտային հանգույցների վրա տեղադրում
		Մարզի զբոսաշրջային միջազգայնացվածության ցածր մակարդակ	Զբոսաշրջության պետական կոմիտե Տավուշի մարզպետարան Տավուշի տուրիզմի զարգացման գործակալություն ՄԱԶԾ Տավուշի զբոսաշրջության զարգացման և հետազոտության կենտրոն Դիլիջանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն Մարզի զբոսաշրջային խոշոր գործատուներ Հայ Առաքելական Եկեղեցու Տավուշի թեմ	Միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին մասնակցություն Մարզում տեղական և միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսների կազմակերպում Արտասահմանյան զբոսաշրջային բլոգերների, լրագրողների և զբոսաշրջային օպերատորների, գործակալների ճանաչողական այցերի կազմակերպում Արտասահմանյան և տեղական զբոսաշրջային ձեռնարկությունների միջև համագործակցության հաստատում և պայմանագրերի կնքում Մարզի զբոսաշրջային բրենդի ստեղծում
		Մարզի սահմաններում զբոսաշրջային գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների փոխհամագործակցության ցածր մակարդակ	Տավուշի մարզպետարան Տավուշի տուրիզմի զարգացման գործակալություն Զբոսաշրջության պետական կոմիտե ԵՊՀ ԻՄ ՄԱԶԾ Տավուշի զբոսաշրջության զարգացման և հետազոտության կենտրոն Դիլիջանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն Հայ Առաքելական Եկեղեցու Տավուշի թեմ	Պարբերաբար համաժողովների կամ աշխատաժողովների կազմակերպում Փորձի փոխանակման հարթակների ստեղծում
		Տեղացի զբոսավարների պակաս և զբոսավարներին տեղում վերապատարաստելու ինստիտուտի բացակայություն	ԵՊՀ ԻՄ Տավուշի տուրիզմի զարգացման գործակալություն ՄԱԶԾ Տավուշի զբոսաշրջության զարգացման և հետազոտության կենտրոն Դիլիջանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն Հայ զբոսավարների գիլդիա	Տարին նվազագույնը մեկանգամյա պարբերականությամբ զբոսավարների և ուղեկցողների դասընթացների կազմակերպում
		Մարզում տեղական զբոսաշրջային օպերատորական/գործակալա	Մարզի խոշոր զբոսաշրջային գործատուներ	Գործող զբոսաշրջային խոշոր ընկերությունների կողմից տեղական տուրփաթեթների առաջարկի ավելացում

		կան գործունեության թույլ զարգացվածություն		
		Միջհամայնքային տրանսպորտային կապերի բացակայություն կամ վատ վիճակ	Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն Տավուշի մարզպետարան ՏԻՄ-եր Երթուղիները շահագործող ընկերություններ	Զբոսաշրջային նպատակներից ելնելով՝ հիմնական զբոսաշրջային սեզոնին հատուկ զբոսաշրջային երթուղային տաքսիների ներդրում, այսինքն՝ միասնական կազմակերպված զբոսաշրջային երթուղային ցանցի ստեղծում:
		Միջհամայնքային գործող տրանսպորտային միջոցների ֆիզիկական մաշվածություն և ոչ էսթետիկ վիճակ	Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն Տավուշի մարզպետարան ՏԻՄ-եր Երթուղիները շահագործող ընկերություններ	Այժմ համար գեղեցիկ դարձնել մեքենաների ինտերիերը՝ կոսմետիկ վերանորոգման տեսքով
		Սանհանգույցների ոչ բավարար քանակ և եղաների վատ սանիտարահիգիենիկ վիճակ	Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն Տավուշի մարզպետարան ՏԻՄ-եր Սանհանգույցները շահագործող ընկերություններ	Ստեղծել եղած սանհանգույցների որակով զբաղվող կառույց կամ մարզպետարանի և ՏԻՄ-երի ռեսուրսներով վերահսկել այն
		Հյուրատնային բիզնեսի չկարգավորված աճ	Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն Տավուշի տուրիզմի զարգացման գործակալություն Զբոսաշրջության պետական կոմիտե ՄԱԶԾ Տավուշի զբոսաշրջության զարգացման և հետազոտության կենտրոն Դիլիջանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն	Ստեղծել խորհրդատվական կազմակերպություն, որը նմանատիպ նպատակներ ունցող անհատներին կտրամադրի մասնագիտական խորհրդատվություն՝ աշխատանքները սկսելու ռիսկերի ու հնարավորությունների մասին
		Միջպետական ճանապարհներին զբոսաշրջային նպատակներով կառուցված մեծ թվով շենք-շինությունների լքված (չօգտագործվող) վիճակ	Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն Տավուշի մարզպետարան ՏԻՄ-եր Այդ շինությունները շահագործող անհատներ	Այդ շինությունները հնարավորության սահմաններում օգտագործել որպես տեղական զբոսաշրջային հուշանվերներ և այլ նյութական ապրանքների վաճառքի կետեր
		Զբոսաշրջիկներին մարզում	Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն	Գործող ռեստորանային և հյուրանոցային

		«երկար պահելու» ծառայությունների թերի զարգացվածությունը	Տավուշի տուրիզմի զարգացման գործակալություն Զբոսաշրջության պետական կոմիտե Դիլիջանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն ՄԱԶԾ Տավուշի զբոսաշրջության զարգացման և հետազոտության կենտրոն	համալինները կարող են իրենց զբոսաշրջիկներին առաջարկել իրենց իսկ կողմից մշակված զբոսաշրջային փաթեթներ և գտնել տեղական մշակույթին բնորոշ տարրեր, որոնք կարող են զբոսաշրջիկին ավելի երկար պահել մարզում՝ օրինակ կավագործության, փայտագործության, գորգագործության ուսուցանում և վերջում զբոսաշրջիկներին՝ իրենց իսկ ձեռքով ստեղծված իրերի տրամադրում
8.	Մշակութային-վարքագծային	Կարծրատիպեր – զբոսաշրջային ինդուստրիայի ձեռնարկություններում, հատկապես հյուրանոցներում և ռեստորաններում, աշխատողների մասին տեղի բնակչության ունեցած բացասական պատկերացումներ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Տավուշի մարզպետարան ՏԻՄ-եր Մարզի միջին մասնագիտական կրթական հաստատություններ ԵՊՀ ԻՄ Դպրոցներ Հայ Առաքելական Եկեղեցու Տավուշի թեմ	Պարբերական կրթական, հոգեբանական վերապատրաստման աշխատանքների, ծրագրերի իրականացում՝ դպրոցներում, բուհերում
		Զբոսաշրջային մշակույթի ցածր մակարդակ	Զբոսաշրջության պետական կոմիտե Տավուշի մարզպետարան Մարզի միջին մասնագիտական կրթական հաստատություններ ՏԻՄ-եր ԵՊՀ ԻՄ Դպրոցներ Հայ Առաքելական Եկեղեցու Տավուշի թեմ	Զբոսաշրջային կուլտուրան՝ զբոսաշրջիկի հետ վարվելու, զբոսաշրջային գործունեությամբ զբաղվելու յուրահատկությունները ցուցադրող տեսահոլովակների պատրաստում և տարածում Տեղացի բնակիչների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպում՝ սկսած դպրոցական տարիքից Տարածքների շինությունների արտաքին տեսքի վերաձևավորում՝ street art-ի օգնությամբ, տվյալ տարածքի կոլորիտին համապատասխան
		Զբոսաշրջային ծառայությունների մատուցման որակի խնդիրներ	Մարզի միջին մասնագիտական կրթական հաստատություններ Մարզի զբոսաշրջային խոշոր գործատուներ Տավուշի տուրիզմի զարգացման գործակալություն	Մասնագիտական վերապատրաստման դասընթացների կազմակերպում

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ


Տավուշի մարզն ունի զբոսաշրջության զարգացման մեծ ներուժ, որը ներկայումս մասնակի է օգտագործվում: Վերջինս ժամանակի ընթացքում պետք է ավելացնել՝ հիմնելով կայուն զբոսաշրջության սկզբունքների վրա:

Տավուշի մարզի զբոսաշրջային ներուժի վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզում, որպես **զբոսաշրջության առանցքային տեսակներ**, կարող են դիտարկվել հետևյալ տեսակները (իրենց ճյուղային տարատեսակներով)՝

- Առողջարանային/ռեկրեացիոն
- Էկոլոգիական
- Կրթական
- Էքստրեմալ/արկածային
- Ագրո-/գյուղական
- Մշակութային (նյութական, ոչ նյութական, կրոնական, իրադարձային):

Միաժամանակ պետք է նշել, որ այս տեսակների զարգացումը պետք է իրականացվի համալիր կերպով և զուգակցված համադրված:


Ընդհանուր առմամբ զբոսաշրջության տվյալ տեսակների համար մարզի բոլոր տարածքներում կան որոշակի նախադրյալներ, բայց հաշվի առնելով դրանց զարգացնելու համար եղած ներուժի համամասնությունները, մարզի աշխարհագրական առանձնահատկությունները և յուրօրինակ քաղաքաաշխարհագրական դիրքն ու դրա առանձնահատկությունները և հայեցակարգում նշված սկզբունքները, առաջարկվում է զբոսաշրջության այս տեսակների հետևյալ տարածական բաշխվածությունը (Նկ. 1):



Նկար 1-ը ցույց է տալիս, որ մարզի յուրաքանչյուր տարածքի (տարածաշրջան, համայնք, գյուղ, քաղաք) զբոսաշրջության զարգացման համար զբոսաշրջության նշված տեսակները պետք է համարել առաջնահերթ, ինչը միաժամանակ չի նշանակում, որ այլ տեսակներ այդ տարածքներում զարգացնել չի կարելի (այստեղ առաջարկվում են առաջնահերթություններ, իսկ գույները ցույց են տալիս տարածաշրջանների՝ զբոսաշրջության տեսանկյունից, մարզի համար առաջնահերթ լինելու համեմատական աստիճանը):

Զբոսաշրջային ներուժի վերլուծությունը ցույց է տալիս, որ Տավուշի մարզում **զբոսաշրջության հեռանկարային տեսակներ** են համարվում մարզի ռեսուրսների վրա հիմնված հետևյալ տեսակները (Նկ. 2)՝

- ✓ Գործարար (MICE)
- ✓ Հնագիտական
- ✓ Գինու
- ✓ Սահմանամերձ³
- ✓ Զրային (գետային, ջրամբարային)
- ✓ Պարապլանիզմ
- ✓ Լեռնագնացություն
- ✓ Ուխտագնացություն:



Նկար 2. Տավուշի մարզի զբոսաշրջության հեռանկարային տեսակներն ըստ տարածաշրջանների

³ Հատուկ առանձնացված մի քանի մարտական հենակետեր զբոսաշրջային այցելությունների կազմակերպում (կազմակերպումից առաջ պետք է մանրակրկիտ ուսումնասիրել և վերլուծել հնարավոր տեղեկատվական գաղտնիության և անվտանգության խնդիրները) [8]:

Մարզի համար հեռանկարային է համարվում զբոսաշրջության առանցքային տեսակների կազմակերպման ժամանակ զբոսաշրջության հետևյալ ձևերի վրա շեշտադրումներ կատարելը՝

- ✓ *Հանգստյան օրերի զբոսաշրջություն* (weekend tourism) – այսինքն՝ մարզում առաջարկվող զբոսաշրջային ծառայությունները հարմարեցվեն նաև մարդկանց շաբաթվա ազատ օրերի հանգիստը կազմակերպելու համար,
- ✓ *Փորձառության հենք զբոսաշրջություն* (experience-based tourism) – այսինքն՝ մարզում առաջարկվող զբոսաշրջային ծառայությունները լինեն ներառող, ակտիվ և զբոսաշրջիկները ներառվեն տեղական կյանքին՝ հատկապես ոչ նյութական մշակույթի տարրերի (խաղեր, արհեստներ, սովորույթներ, տոներ, խոհանոց և այլն) օգտագործման օգնությամբ:

Մարզի զբոսաշրջության զարգացման նոր հեռանկարներ կարող են բացել՝

- Գյուղական տարածքներում էկո-/ագրո զբոսաշրջային միջավայրերի ստեղծումը, ինչպես բուն գյուղի բնակելի տարածքում, այնպես էլ համայնքապատկան բարձր լեռնային տարածքներում,
- Զբոսաշրջիկներին վարձույթով ծառայությունների տրամադրումը (փոխադրամիջոցներ՝ ավտոմոբիլներ, հեծանիվներ, գրաստներ, արշավային պարագաներ) համապատասխան ձեռնարկատիրական գործունեության միջոցով,
- Մարզի զբոսաշրջային բրենդի ստեղծումը,
- Էկոնոմ դասի (ոչ շքեղ) հյուրանոցների կառուցումը,
- Զբոսաշրջության կառավարման համակարգի զարգացումը⁴:

⁴ Ներկայումս ՀՀ զբոսաշրջության ոլորտի կառավարումն իրականացվում է վերևից ներքև մոդելով՝ արտահայտված ՀՀ կառավարության Էկոնոմիկայի նախարարություն Զբոսաշրջության պետական կոմիտեի գործառնություններով և մարզպետարաններում (որոշ դեպքերում նաև ՏԻՄ-երում) զբոսաշրջության զարգացման պատասխանատուներով:

Մարզում զբոսաշրջության կառավարման արդյունավետության բարձրացման համար պետք է ստեղծել պետական կառավարման համակարգին օգնող և կառավարման ներքինից վերև մոդելի իրականացումն ապահովող միավորներ նույնպես: Այսինքն՝ մարզի զբոսաշրջության կառավարումը պետք է ընթանա վերևից ներքև և ներքինից վերև մոդելների համադրման տեսքով: Վերջինս առաջարկվում է իրականացնել մարզի տարածքում դեստինացիաների կառավարման կազմակերպության(ների) (ԴԿԿ) ստեղծման օգնությամբ, որը (որոնք) ըստ անհրաժեշտության կարող է (են) ունենալ իր (իրենց) ներկայացուցիչները տարբեր համայնքներում: ԴԿԿ-ն դառնում է զբոսաշրջության շահագրգիռ տեղական կողմերին (համայնքներ, զբոսաշրջային ինդուստրիայի ձեռնարկություններ և այլն) միավորող և նրանց հիման վրա ստեղծվող մարմին: Այս կազմակերպչական մոտեցման (համայնքահեն ԴԿԿ) դեպքում հաշվի են առնվում և պետական քաղաքականության, և կազմակերպության՝ որպես դեստինացիայի համար զբոսաշրջային ծառայություն մատուցող և համակարգող ընկերության, շահերը [11]: ԴԿԿ պարտականությունն է զարգացնել դեստինացիան՝ հիմնական շեշտը դնելով համակարգման վրա: Ծառայություն մատուցող ընկերությունները, համայնքապետարանը/մարզպետարանը համարվում են գործադիր ուժ քաղաքական-կազմակերպչական շրջանակներում: Սա, մի կողմից, նշանակում է, որ ծառայություն մատուցող բոլոր ընկերություններին հավասար վերաբերմունք է ցուցաբերվում՝ անկախ դեստինացիայում իրենց ունեցած կարևորությունից: Մյուս կողմից, ԴԿԿ-ն փոքր ազդեցություն է ունենում ծառայություն մատուցող ընկերությունների բիզնես որոշումների վրա, քանի որ նրանք անկախ են և, այդպիսով, պատասխանատու են իրենց սեփական բիզնեսի հաջողության համար [11]:

ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգը հենվում է կայուն զբոսաշրջության սկզբունքների և նպատակների վրա, ինչպես նաև հաշիվ է առնում Տավուշի մարզի տարաբնույթ՝ բնական, սոցիալ-տնտեսական, պատմամշակութային, աշխարհագրական, աշխարհաքաղաքական և այլն, առանձնահատկությունները:

Հայեցակարգում նշված առաջարկները և սկզբունքները հաշվի առնելով՝ մարզի զբոսաշրջության զարգացումը ռազմավարական տեսանկյունից կարող է ապահովել մարզի տնտեսության բազմազանեցված զարգացում:

Ընդհանուր առմամբ մարզի զբոսաշրջության զարգացումը պետք է հենվի առաջին հերթին բնական միջավայրի վրա, այսինքն՝ մարզի զբոսաշրջության համար առաջնահերթությունը պետք է տալ բնահենք զբոսաշրջությանը՝ հայեցակարգում նշված իր տարատեսակներով: Միաժամանակ հարկ է նշել, որ մարզում առկա պատմամշակութային արժեքները (նյութական և ոչ նյութական), իրենց բազմադարյա պատմությամբ և ներկայումս ունեցած մեծ պահպանարկի շնորհիվ առաջիկայում շարունակելու են լինել դեպի մարզ զբոսաշրջային հոսքեր ապահովող գրավչություններ:

Մարզի զբոսաշրջության զարգացումը շարունակական ապահովելու համար ռազմավարական նշականություն ունի ոլորտի տեխնոլոգիացումը և կրթական-ուսուցողական ծրագրերի իրականացումը, ինչպես նաև մարզի տարածքի զբոսաշրջային մասնագիտացումը՝ գոտիավորումն ըստ զբոսաշրջային գործունեության տեսակների և առաջնահերթության:

Մարզի զբոսաշրջային ներուժը դեռևս պետք է համալիր և համակարգված կերպով օգտագործել:

Մարզի զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրների մի մասը, տիպիկ լինելով մարզին, իսկ մյուս մասը, կարելի է ասել, բնորոշ լինելով նաև ողջ հանրապետությանը, մարզի զբոսաշրջության կայուն զարգացման խնդիրների լուծման ներքնից վերև և վերնից ներքև մոտեցումների և մեխանիզմների կառավարման համակարգի գործարկման հիմք են տալիս (հայեցակարգում նշված ԴԿԿ օրինակով):

Մարզում զբոսաշրջությունը պետք է զարգանա տնտեսական և մարդկային գործունեության մյուս բանագավառների հետ համատեղ՝ լինելով ինչպես տնտեսական գործունեության առանձին տեսակ, այնպես էլ հանդես գալով որպես գործունեության մյուս տեսակների բաղադրիչ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Հայաստանի ազգային ատլաս, Հատոր Ա: Խմբագրական խորհուրդ. – Եր., 2007
2. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի 2017-2025 թթ. զարգացման ռազմավարություն: Հաստատված ՀՀ կառավարության 2017 թ. հուլիսի 6-ի նիստի N 29 արձանագրային որոշմամբ, 61 էջ
3. ՀՀ զբոսաշրջության զարգացման հայեցակարգ. – Եր., 2008, 62 էջ
4. ՀՀ Կարմիր գիրք, Եր., 2013
5. Պողոսյան Դ.Ս., Խոյեցյան Ա.Վ. Հայկական լեռնաշխարհի լանդշաֆտները և ֆիզիկաաշխարհագրական շրջանները, Եր., 2008, 232 էջ
6. Տավուշ. նյութական և հոգևոր ժառանգություն: Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր. – Եր., 2009, 290 էջ
7. Տավուշ: Սոցիալ-մշակութային գործընթացներ (Ավանդույթ և արդիականություն) / ՀՀ ԳԱԱ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ. – Եր., 2014, 360 էջ,
8. Տավուշի մարզի Զբոսաշրջության զարգացման աշխատանքային խմբի հետազոտության արդյունքները ներկայացնող հաշվետվություններ, 2019 թ.
9. Aleksanyan G. Preconditions and perspectives of sustainable tourism development in Tavush region, Сборник материалов “Второй Южно-российской научно-практической конференции студентов, аспирантов и молодых ученых по туризмоведению”. Ростов-на-Дону, 2017, стр. 45-48
10. Brent Ritchie J.R., Geoffrey I. C. The competitive destination: a sustainable tourism perspective, UK, 2003
11. Scherhag K. Sustainable Destination Management, 2016, Germany, 119 p.
12. UN. Agenda 21 for the Travel and Tourism Industry, 1996
13. UNEP-UNWTO. Making Tourism more Sustainable: A Guide for policy makers. – 2005, – 203 p.
14. WTTC. Travel and tourism: economic impact.– Armenia – 2018, – 24 p.
15. www.armstat.am - ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայք